

ՄԻՔՐՈՒՄ

ՅԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագրի՛ 10 Շր. արեկիսն

Հասցե՛

Réd. du jour., VERADZNOUTIOUN. — Roustchouk

Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

ԲՈՒԹՈՒԱԶԻԱ ԵՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

I.

Մի քանի ամսից ի վեր ամեն օր կատարում են ձերբակալություններ կովկասի գանազան քաղաքներում — և պետք է աւելանանք, որպէս և Ռուսաստանի ամեն ծայրերում ու անկիւններում. — Այդ ձերբակալությունները յատկապէս հայերից չեն, այլ և միւս ազգերից և գլխաւորապէս վրացիներից։ Հասկանալի է այն երկիւղը, որ առաջանում է տեղական ազգաբնակչութեան մէջ ռուս կառավարութեան այդ բռնութիւններից։ Հասկանալի է նաև մտքերի այն զայրոյթը, որ բնական հետեանքն է ամեն հալածանքի ելից այն հանգամանքը, որ ձերբակալում են անխտիր կերպով հասարակութեան ամեն խաւերից, ըստ ինքեան ապացոյց է կառավարութեան երկիւղի իր ամեն կարգի հպատակներից ընդհանրապէս։ Եթէ մի և նոյն Ժամանակ դա ապացոյց է նաև, որ վերից մինչև ցած ամբողջ հասարակութեան մէջ բազմաթիւ են դժգոհ, հետեաբար՝ ոկասկածելի տարրերը, — նշանակելի է սակայն այն իրողութիւնը, որ կառավարութեան նետերը գլխաւորապէս և առաջնապէս ուղղւած են բանւոր դասակարգի անդամների և դրանց ինտելիգենտներ կայացուցիչների վրայ։ Պատճառը։ Ահա՛ ։

Ռուսաստանի այլ և այլ ազգութիւնների բուրժուազիայի ինդուստրիալ, գաղափարական ներկայացուցիչները տասնեակ տարիներից ի վեր կրիտիկական հայեացքով են նայում իրանց երկրի քաղաքական կարգերի վրայ։ Այդ հայեացքը, ճիշդ է, միակերպ չէ, այսինքն բուրժուազիայի գանազան խաւերի համեմատ դրանց ներկայացուցիչներն էլ արտայայտիչ են առաւել կամ նւազ արմատական, առաւել կամ նւազ չափաւորական ոգով սնւած կրիտիկական հայեացքի։ Այդ գանազան աստիճաններ ունեցող կրիտիկական հայեացքութիւնները,

սակայն, ամփոփւած են մի և նոյն ընդհանուր օղակում. նրանք հակադէսպոտական են, նրանք հակառակ են Ռուսաստանում տիրող քաղաքական ընդհանր, բուրժուազիայի ամենալաւ մտքերը, ամենալուսամիտ արտայայտիչները, սնւած այդ ոգով, դէմօկրատական տեսակէտի քննութեան են միշտ ենթարկւած այդ ընդհանր և թէօրիապէս ձեւաբար պած են դէմօկրատական մի ընդհանր հաստատման անհրաժեշտութիւնն ու պահանջները Ռուսաստանում։ Հէնց նոյն այդ դէմօկրատական ինդուստրիալ գործնական արտայայտիչներ յայտնեցան Ռուսաստանի հասարակութեան ամենազգայուն և ամենագիտակցական տարրերը, այն է ուսանող երիտասարդութիւնը։ Իրերի տրամաբանութեան զօրութեամբ այդ տարրերն անցան յեզափոխական ասպարէշ, ստեղծեցին երկրում յեզափոխական հոսանք և տասնեակ տարիների ընթացքում մղելով յեզափոխական կռիւռուսական դէսպոտիզմի դէմ, նրանք հանդիսացան քաղաքական հերոսներ, ոմանք՝ մեծ, նրանք եղան նաև ինքնուրաց մարտիրոսներ մեծ գաղափարի, ազատութեան գործի, եղբայրութեան իրէպի։

Եւ սակայն, մինչդեռ Ռուսաստանի մի կողմից բուրժուազիայի և միւս կողմից դէմօկրատիայի այդ իրէպիստ և անձնուրաց ինտելիգենտ զաւակներն իրանց նետում էին մարտը. մինչդեռ տասնեակ տարիների ընթացքում շարունակ ընկածների ետեւից առաջ էին գալիս նոր մարտիչներ նորից ընկնելու համար, միշտ ձգտելով հարթել ճանապարհը դէպի փրկութիւն, ձգտելով քաղաքական ինքնագործունէութիւն ստեղծել ռուս հասարակութեան մէջ, ձգտելով, անասելի շոհողութիւնների գնով, խաւար ժողովրդի սարկացած հոգում թափանցել տալ ինքնագիտակցութեան կայծ, ըմբոստութեան ոգի, յեզափոխական հոսանք, — Ռուսաստանի բուրժուազիան, թագցրած իրա գլուխն իր տնտեսական ընչաքաղցու-

թեան ու քաղաքական երկիւղաժութեան մանր առանձնաշնորհումների և մեծ եսամոլութեան տակ, իբրև կրիայ իր գլուխն իրա սակրի տակ, դիտում էր անբողբ, անձայն ու սարսափած իրա և Ռուսաստանի ամբողջ դէմօկրատիայի շահերի շատագոյ հերոսների անհաւասար կռիւնները և հերոսական պարտութիւնները։ Բուրժուազիան, որի քաղաքական ու տնտեսական շահերի յաղթանակը պիտի նկատէր ռուս յեզափոխականների յաղթութեան անմիջական հետեանքը. բուրժուազիան, որի վրայ է ընկնում պատմականապէս մի մեծ դեր, այն է Ռուսաստանի դէսպոտական ընդհանր բռնի վերածումը դէմօկրատական ընդհանր բուրժուազիան, որ քաղաքականապէս դեռ զուրկ է մնացել իր դասակարգային պատմական շահերի պարզ գիտակցութիւնից, քաղաքականապէս զուրկ նաև ամեն նախաձեռնութիւնից, անգործունեայ, երկիւղած, պստիկացած դարևոր բռնութեամբ ներմուծւած ստրկական ու ծառայական ոգով ու բնաշնորհով, — այդ բուրժուազիան, երկար տարիների ընթացքում՝ մինչև այսօր, յանձին իրա և ռուս ժողովրդի ամենալաւ զաւակների, շարունակ իրան և իրա պատմական շահերը թուղեց ցարիզմի վայրենի ու տմարդի կամայականութեան խելագարութիւններին զոհ զնալ, օրից օր աւելի և աւելի ամրապնդւած տեսնելով դէսպոտիզմի սիւները, աւելի և աւելի կատաղի՝ առաջացած անվախճան ընկալիչան և աւելի և աւելի յետաձգւած՝ առաջադիմութեան, ուրեմն և քաղաքական ազատագրութեան, գործը Ռուսաստանում։ Իսկ միւս կողմից ռուս ժողովրդային ընդհանրութիւնը կծկւած էր բռնապետութեան կնոսի տակ, խաւար, թշւառ, իբրև խոր քնով անցած մի տիտան, անգիտակ իրա իսկ ազատագրութեան համար մղւած սուրբ կռիւն, անգիտակ իր թշւառ դրութեան ամբողջ խորութեան։

Այսպէս, Ռուսաստանի բուրժուազիան, իբրև դասակարգ,

մինչև այսօր հանդիսացել է անընդունակ քաղաքական կռիւ համար ընդդէմ իր ատած ցարիզմի՝ ընդդէմ, և ժողովրդային ընդհանուր դէմօկրատիան էլ մընացել է քարացած իր խաւար մթնոլորտի թանձրութեան տակ։ Եւ միայն փոքրիկ բուրժուազիայի ու դէմօկրատիայի շարքերից լուսաւոր մտքերը և իր դէպով գրաււած գիտակցական տարրերը, և խումբ-խումբ, կամ նոյն իսկ անհատապէս նետում մարտադաշտը, հնչեցնում մեծ խօսքը և պարտելով, լցնում բանտերը, անհետանում Սիբիրի սառնամանիքներում, բարձրանում կախաղան։ Բուրժուազիան, իբրև դասակարգ՝ կոչւած տապալելու ցարիզմը և հաստատելու մի դէմօկրատական ընդհանր Ռուսաստանում, այդպիսով ապացուցեց իր ապիկարութիւնն իրա պատմական մեծ դերի լրացման համար։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

II.

Կովկասանայ քաղաքական կուսակցութիւնները

Մի ժողովուրդ, որը չունէ քաղաքական կուսակցութիւններ, այսինքն քաղաքական կեանք, դատապարտւած է մահի, աստիճանական վերացման։ քաղաքական կուսակցութիւններն են միայն, որ տալիս են նրան կեանք, կենսունակութիւն, ապրելու իրաւունք։ Հայերը բարեբախտաբար այն ազգերից են, որոնք տոկուն են կեանքի ձեւափոխութեան հանդէպ, անշարժ եւ նեխւած կեանքի էլօլիցիայի մէջ։ Հայերը գիտեն կեանքի հետ շարժել, կեանքի հետ գնալ, կեանքի երեւոյթներին հակադրել։ Ուստի կովկասի տնտեսական եւ սօցիալական դրութիւնների դարգացումը, պետութեան քաղաքականութեան սուր կերպարանք ստանալը հայերի վերաբերմամբ, չէին կարող չստեղծել ռուսահայ կեանքում քաղաքական շարժում։ Դրանք են ահա այն պայմանները, որոնք առաջ են բերել ռուսահայերի մէջ քաղաքական այն երկու ընդհանուր ուղղութիւնը, որի մասին յիշել էի անցեալ յօդուածիս մէջ։ Այդ երկու հոսանքներն են — պրոլետարական եւ բուրժուական)։ Իւրաքանչիւր

*) Այդ բառերի փոխարէն չուղե-

չիւրը բաժանելով երկու թեւերի, ուրեմն ընդհանուր ատմամբ չորս կուսակցութիւն։ 1) գուր սօցիալիստական-բանւորական՝ հիմնւած միջազգայնութեան վրայ, 2) ազգայնական-սօցիալիստական-բանւորական՝ կանգնած ազգայնական սկզբունքի վրայ, 3) ազգայնական-բուրժուական-յեղափոխական՝ հիմնւած քաղաքական ազատամտութեան դաւաճանքի վրայ եւ վերջապէս 4) ազգայնական-սոցիալիստական՝ հիմնւած պահպանողական մտքի եւ ինքնաարաշտպանութեան գաղափարի վրայ։ Անշուշտ դրանցից իւրաքանչիւրը իւր կողմից այլ ու բէնի պոչի պատճառով կարող է բաժանուել զանազան խմբերի եւ «կոմիտէների», բայց դրանով երբէք չի կանգարուի ընդհանուր ուղղութիւնը, հիմնական ոգին, բնորոշող յատկութիւնը։

Որչափ էլ մի կուսակցութեան անունը բնորոշելիս լինի նրա սկզբունքներն ու ձգտումները, այնուամենայնիւ արժէ դրանց վրայ մի քիչ ծանրանալ. եւ կարծում եմ ընթերցողը չի բողոքի, եթէ՛ առիթից օգտուելով՝ աւելի երկար կանգ առնեմ նրանց հիմնական բնաւորութեան, սկզբունքների, նպատակների պնդաբանութեան վրայ, քան այդ պահանջում է յօդաւորու բուն նպատակը։ Դա թւում է մեզ նոյնիսկ անհրաժեշտ, որովհետեւ մեզանում թիւրիմացութեամբ այս կամ այն անուն հետ կապել են սխալ հասկացողութիւններ։

Հայ բանւորական սօցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը, լինելով պրօլետարիատի կուսակցութիւն եւ միջազգային սօց. -դեմոկրատիայի մի ճիւղը, պէտք է ունենայ նոյն էութիւնը, իրերի նոյն աշխարհայեցողութիւնն ու կեանքի բմբմունքը, նոյն նպատակը ինչպէս եւ վերջինս։ Սօց. -դեմոկրատիզմը դուրս է տարածութիւնից (ոչ ժամանակից), նա հասարակական անտեսութեան արդի կազմակերպութեան՝ կապիտալիզմի ծրնունդն է, հասարակութեան բուրժուական ձեւի արդիւնքը։ Ուստի մեր մտղորակի իւրաքանչիւր ծայրում էլ կարող է եւ պէտք է նա անխուսափելիօրէն ծնւի ու սնուի, ուր կայ մարդկային հասարակութիւն իւր կապիտալիստական-բուրժուական ուժերով։ Նա պատմութեան ընթացքից ծագած, այսպէս ասած, համահասարակական սերմ է, որ իրեն յատուկ հողի մէջ ամուր արմատներ է ձգում, ուր էլ որ լինի այդ հողը՝ Գերմանիայում թէ Կովկասում, Զապօնիայում թէ Բուլղարիայում։ Լինելով համահասարակական յեղափոխական սօց. -դեմոկրատիան չէ՛ ճանաչում հասարակութիւն կազմող տարքի արտաքին եւ հոգեբանական տարքերութիւնները, նրա ընդհանուր եւ հիմնական սկզբունքները իրենց էութեամբ միեւնոյն են զանազան անուն կրող մարդկային մասսաների համար։ Նա ըստ իւր էութեան չէ կարող, զոր օրինակ, գերմանացու համար լինել միջազգային, բուլղարացու՝ մանր-բուրժուական ուսմունք, հայի համար ունենալ ազգայնական

ցինք ուրիշը գործածել. քաղաքակրթւած հասարակութիւնները արդի կազմակերպութեան ձեւի համեմատ այդ արտայայտութիւնները դարձել են համարեալ terminus-technicus եւ ունեն իրենց յատուկ բովանդակութիւնը։ Միայն թող այն տարածւած թիւր պատկերացումն առաջ չգայ՝ «Իւրազգայնացած փոքր եւ հաստ գրգան» բուրժուական շահն ու ձգտումները գիտակցօրէն կամ անգիտակցօրէն պաշտպանող ու արտայայտող գաղափարական յեղափոխական նոյնպէս մասնում է այդ շրջանակի մէջ։

չպակի։ Ըստ իւր աշխարհայեցողութեան ան արտայայտելն է դասակարգային անհասարակութեան վրայ կառուցւած բոլոր կապիտալիստական ազգերին յատուկ բուրժուական հասարակութիւններ ռուրոյն մասի ինքնուարժեանքն ունեւորութեան ձգտումները, իրերի ընթացքով պայմանաւորւած նրա քաղաքական եւ սօցիալական իրաւիւնքը։ Այժման դասակարգային պետութեամբ եւ բուրժուական հասարակութեամբ ճնշող եւ շահագործող պրօլետարիատը՝ գիտակցութեան եկած բանւոր դասակարգը՝ ձգտում է հասնել իւր միասնային, կատարել օրեկտիւ գնացող պայմանաւորւած իւր պատմական դերը։ Նրա այդ պատմական դերն է՝ վերացնել հասարակութեան դասակարգերի գոյութիւնը եւ նոյն այդ գոյութիւնը պայմանաւորող մասնաւոր սեփականութեան իրաւունքը արդիւնաբերութեան միջոցները վրայ եւ կառուցանել դասակարգային հասարակութեան ու հասարակական արդիւնաբերութեան վրայ հիմնւած մարդկային հասակացութիւն, որով ընդմիջող վերջ կտրուի զանազան ձեւով ու եղանակով արտայայտող շահագործումներին եւ ճնշումներին ընդհանրապէս։ Բայց հասարակական այժմեան կարգն ու կանոնը՝ բուրժուական դասակարգի անհատական եւ իշխողական «թէզը» — չէ կարող հաշտուել բանւոր դասակարգի ընկերական եւ հասարակական «անտիթէզը» հետ, եւ այդ հակադրութեանները շարժումից առաջ է դալիս այդ երկու դասակարգերի միջեւ մրցումն՝ դասակարգային կռիւ, որի միջոցով միայն կարող պետի լինի պրօլետարիատը առաջ բերել սօցիալական յեղափոխութիւն, այսինքն ամբողջովին յեղաշրջել հիմնովին կերպարանափոխել հասարակութեան արդի ձեւը։ Բայց բուրժուական հասարակութիւնը յեղաշրջելու եւ նրան նոր սօցիալիստական կազմակերպութիւն տալու համար առաջին պայմանը եւ արամբանական անհրաժեշտութիւնն է, որ անտեսուած եւ իրականապէս ճնշւած դասակարգը իւր զէնքով՝ դասակարգային սկզբունքով յեղափոխել պետական կարգերը, այսինքն առաջ բերէ ֆալսիֆիկան յեղափոխութեան մէջ լայն իրաւունքներ եւ ուժ, յետոյ նաեւ նրա զիւր, որպէս զի կտրող լինի տալ պետութեան զէմօկրատական եղանակ, իսկ հասարակութեան՝ սօցիալիստական ձեւ։ Սօցիալիստական հասարակութիւն եւ դեմոկրատական պետութիւն — ահա բոլոր ազգերի, ուրեմն նաեւ հայ՝ բանւորական սօց. -դեմոկրատիայի կուսակցութեան լինելու պայմանը։

Սակայն զանազան երկրները եւ ազգերը բանւորութեան վերջնական նպատակի այդ ամբողջական նոյնութիւնը չենք կարող տեսնել նրա զէպի նպատակ տանող ճանապարհի նկատմամբ։ Սա չպիտի այնպէս հասկացուի, թէ միակ նպատակի ճանապարհը զանազան ուղիներից է բաղկացած, որոնք՝ այսպէս ասած՝ դիվերգենցներ (divergence) են վերելից զէպի ներքեւ։ Միեւնոյն սկզբունքից բխող եւ միեւնոյն նպատակին տանող ճանապարհը չէ կարող էպպէս տարբերուել խօսքը կարող է միմիայն վերաբերել նրա վրայ գտնուող պատմական արգելքներին եւ խոչընդոտներին, որոնք հէնց պայմանաւորւած են կեանքի զարգացման աստիճանների եւ արտաքին պայմանների տարբերութեամբ։ Գերմանիա, Ռուսաստան-Կովկաս եւ Բուլղարիա չեն գտնուում արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակի նոյն աստիճանի վրայ, եւ երկրորդ, այդ երկրների ինդուստրիական զարգացումը չէ կատարուում սօ-

ցիալական-իրաւական նոյն պայմանները մէջ։ Գերմանիայի բանւորը, զոր օրինակ, վայելում է իրաւական որոշ ազատութիւն, քաղաքական իրաւունքներ, նոյնիսկ Բուլղարիայի բանւորը, այնինչ Ռուսաստան-Կովկասից այդ տարրական ազատութիւնն անգամ չունի, ամբողջապէս զրկւած է քաղաքական իրաւունքից։ Եւ հէնց այդ պատճառով էլ Ռուսաստանի բանւորական կուսակցութիւնները ստիպւած են իրենց քաղաքական ամենաառաջնակարգ հոգը գործնել պետութեան ինքնակալ ուժի միջոցով՝ ցարիզմի ստապուումը, որը բանւորական շարժման առաջին ու ամենազօրեղ թշնամին է եւ ամենամեծ արգելքը նրա զարգացման։ Բայց, ինչպէս ասացի, որչափ էլ տարբեր լինի կուր ծանրակէտը, որպիսի թշնամիներ լինեն զէպի միակ նպատակը տանող ճանապարհի վրայ, այնուամենայնիւ կը սխալ բղխում է մէկ սկզբունքից, ճանապարհը տանում է զէպի միակ վերջնական նպատակը։

Ուրեմն՝ եթէ հայ բանւորական կուսակցութիւնը Կովկասում ուղղում է լինել գուր սօցիալ-դեմոկրատական, պէտք է հիմնւած լինի սօցիալ-դեմոկրատիկ լեռնաբեր վրայ, այսինքն միջազգայնաբան՝ ազգային անխորտակեան ու բանւորական միութեան սկզբունքի եւ դասակարգային շահի՝ պրօլետարիական քաղաքականութեան վրայ։ Միւս կողմից էլ հաստատ լինելով իւր հիմնական սկզբունքները հետեւածքների մէջ, եւ գտնուելով միեւնոյն պետութեան յարկի տակ ու միեւնոյն քաղաքական պայմանները մէջ, նա՛ հայ բանւորական կ. - թիւնը պիտի միացած լինի Ռուսաստանի այլ սօց. -դեմոկրատական կուսակցութիւնների հետ, որոնք նորերս պաշտօնապէս միացել եւ կազմել են Ռուսաստանի Սօց. Դեմ. Բան. Կ. - թիւն։

Բերլին Ս. Կասեան
(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

V.
Բագրի դէպի մասին
Մեր անցեալ աճապարտնօք գրած թղթակցութեան մէջ խօսուածքը էինք Բագրում պատարած ամսոյս 3-ի գէպի մասին մանրամասնութիւններ գրել։ Այժմ մենք կատարում ենք այդ։

Դեռ մաղթանքը կատարելուց առաջ մի քանի սողուն բուրժուաներ եւ ստրկահողի հոգեւորականութիւնը Եղիշէ վ. Մուրադեանի առաջնորդութեամբ խորհուրդ էին անում, իրար յորդորում մաղթանք կատարել, հայլ կերպ, ասում էին նրանք, ինչպէս կարելի է, կառավարութիւնը առանց այդ էլ վատ է նայում մեզ, խամ չը լինենք, մի քիչ էլ հարկաւոր է քաղաքակալութիւնը բանեցնել, սա կեղծիք չէ, ամենեւին։ Մտադրութիւնը անցաւ վճիռի եւ ապա գործադրութեան։ Կատարելի մաղթանքը, կատարելի նաեւ մի արնալից բան, — պատճառ դառնալով դրան։

Ամսոյս 3-ի ժամի 12-ն էր, երբ մաղթանքը սկսեց՝ ոճանր ու լուրակո։ Ներկայ էր մեծ բազմութիւն։ Եղիշէ Մուրադեան

նը քարոզ խօսեց, որով աջողութիւն մաղթեց դուռս մեծապօր ե ողորմած կայսերա զէնքի յաղթանակին՝ Հեռաւոր Արեւելքում։ Մաղթանքին բերել էին և՛ բըւնակալ Յարի պատկերը։ Ահագին բազմութիւնը ոչխարների նման չոքել էր ու աղօթք էր մրմնջում։ Հէնց այդ ժամանակ բազմութեան մէջ նետում է մէկ ուսմբ։ Ռուրը սաստիկ որոտալով պայթում է և ալ ու ձախ դիակներ և վերաւորւածները ւան հանում։ Ժողովուրդը սարսափած անակնկալ այդ գէպից լեղապատառ ցրում է ամէն կողմ փախչելով։

Մաղթանքի ժամանակ աչքի էր ընկնում ստիկանների պակասութիւնը։ Դէպքի տեղն է հասնում նահանգապետը ստիկաններով ու կողակներով։ Չերբակաւած ուսմբերին հարցուփորձ են անում և նրանց վրայ խուզարկելով մէկի գրպանից 2 ուսմբ են հանում։ Այդ ձեռքակալածները ասում են, որ իրենք թագաւորի պատկերն են բռնած եղել, երբ ուսմբը պայթում է, սարսափած պատկերը գցում են ու փախչում։ Բազմութիւնը նկատելով իրենց բռնում է ու սաստիկ ծեծում և իբր թէ նրանցից մէկի գրպանը գնում այդ երկու ուսմբն էլ։ Ոստիկանութիւնը սլ մէկ փպստ չը գտնելով նրանց յանցաւոր լինելը հաստատող՝ արձակում է նրանց մի քանի օրից յետոյ։

Այժմ երեան է գալիս վերաւորւածների համարեա ճիշտ թիւը։ Համարեա ենք ասում, որովհետեւ կան մարդիկ, որոնք երեան չեն եկել գեւ հիւանդանոց չը գնանուն պատճառով։ Այդ թիւը հասնում է 150—170ն ծանր ու թեթեւ միասին հաշւած։ Այստեղ կարելի էր դրանց բուրի անունները, ինչպէս և մեանոյնները, յիշատակել, բայց որովհետեւ ահագին տեղ է բռնում, ուստի բաւականանում ենք միայն նրանց թիւը նշանակելով։

Բագրի բայանի ամբողջ ազգաբանակութիւնը սկսեց բազմատեսակ բացադրութիւններ տալ ու լուրեր տարածել զէպի ինիցիատօրների մասին։ Սկզբում յամբոքօրէն տարածեց, որ դա կառավարութեան, Գոլիցինի և Բագրի նահանգապետ Օդինցևի գործն է։ Ապա աստիճանաբար այդ թուրացաւ և յանցանքի մի մասն էլ ընկաւ Յեղափոխական կուսակցութիւնների վրայ։ Անտար իրար խառնեցին Հնչ. սօց. յեղ. ուսմբ. - յեղափ., Ռուսաստանի սօց. -դէմ. բանւորական և Գրօչակեան կուսակցութիւնները։ Ժողովուրդը խստօրէն դատապարտում է թէ՛ արնալից տեսարանի հեղինակներին և թէ՛ հոգեւորականներին։ Սակայն de facto գեւ հաստատւած չէ թէ ով է այդ սրտածմրկ

այստեղ բնականաբար մեր առաջ
ցցում է մի հարց, — ի՞նչ է
անում կամ ի՞նչ պիտի անէ Գաշ-
նակցութիւնը իւր այդ ծրագրով
կովկասում. այս հարցին մենք
բացարձակ կերպով կը պատաս-
խանենք — ոչինչ: Որովհետեւ
Գաշնակցութիւնը լինելով ո՛ր
սօցիալիստական կուսակցութիւն,
բնականաբար չէր կարող ընտրել
իւր համար զործունէութեան
այն ուղին, որ ընտրել է Հըն-
չակեան կուսակցութիւնը. իսկ
նացիօնալիստական հօդի վը-
րայ էլ գործելու ուսաց միացե-
տութեան դէմ, առնուազն դօն-
քիչուութիւն կը լինէր: Ուստի
նրան մնում էր բացարձակ ան-
գործութիւնը, և այդպէս էլ և
զու. Բայց Գաշնակցութիւնը ինչ-
պէս միշտ, այս անգամ էլ գիւնջ
իւր գործունէութեան սովորական
եղանակին — առիթից օգտուելով
պղտոր ջրի մէջ ձուկ որսալ, ահա
թէ ի՛նչպէս: Այն ժամանակ, երբ
ուսահայը կուսում էր իրեն կլա-
նոզները դէմ և ոտքի էր կանգ-
նել պաշտպանելու իւր դարուոր
սրբազորութեամբ իրաւունքներն,
այդ ժամանակ և մինչև հիմայ
էլ, մի շարք ամիսներ ընթաց-
քում Գաշնակցական օրգանները
չատացան միայն իրենց թեր-
թեր մրտնջող հայհայտական յօդ-
ածներով ընդդէմ ցարի կառա-
վարութեան, առանց յետ դրա-
կան գործի: Իսկ կովկասում Գաշ-
նակցականները աշխատում էին
մտքեր պղտորել և միաժաման-
ակ խաբել թէ ցոյցեր կազմա-
կերպողները, տեւօրներ կատա-
րողներ իրենք են և այդպիսով
փողեր էին շորթում: Մինչդեռ
կովկասում արտայայտուած ժողո-
վրդական ցոյցերը արդենք էին
մասամբ ստրկացած ժողովրդի
բռնաբարութեամբ նուիրական զգաց-
մունքները և զսպումը զայրոյ-
թի ժայթքման և մասամբ էլ
տարիներ ընթացքում եղած
պրօպագանդայի ու քաղաքական
որոշ աստիճանի հասունութեան,
այնպէս որ Գաշնակցական օր-
գանները պրօպագանդան եղած-
չեղած մի հաշիւ է: Բայց Գաշ-
նակցութիւնը ո՛չ միայն շոշա-
փելի գործ չը կատարեց կովկա-
սում, բացի վերև յիշած գործե-
րից, այլ և աշխատեց և աշխատում
է խոչնդոտ հանդիսանալ Հնչակ-
եան կուսակցութեան պրօպագան-
դային իրա արած հակասօցիա-
լիստական քարոզներով: Բացի
գրանից, նրա օրգանների անա-
ժօթութիւնը այնտեղ է հանում,
որ մինչև իսկ (աչքերը խիած
հակայ իրականութեան դէմ) օրը
ցերեկով բաւում են, թէ Հըն-
չակեան կուսակցութիւնը մեռած
է, յրկայ և այլն:

Սակայն, մենք խորհուրդ
ենք տալիս Գաշնակցական թեր-
թերին չըզբազել այնպիսի անու-
տի բաներով և զուր ժամովա-
ճառ չը լինելու առաջ տանելու ի-
րենց ո՛չ սօցիալիստական պրօ-
պագանդան, որովհետեւ դա հիմ-
նովին անօգուտ է և անհամա-
պատասխան մեր ներկայ պայ-
մաններին, պայմաններ, որոնց
լու ըմբռնողը միայն սօցիալիս-
տական անպարէզի վրայ է, որ
կը ձգտի գործել: Արդեօք Հնչ
այդ չէ՞ր պատճառը կովկասի
Գաշնակցութեան պառակտման,
այդ չէ՞ր պատճառը, որ յոցա-
նից շատերը՝ տեւի սօցիալիստ
տարրերը՝ ըմբռնելով ներկայ ի-

րականութիւնը և Գաշնակցու-
թեան անտակտ և անմիտ ուղղու-
թիւնը՝ լատանուեցին և մտան
ու շարունակում են մտնել Հըն-
չակեան շարքերը, ամբողջովին
ընդգրկելով սօցիալիզմը:

Հնչակեան կուսակցութիւնը
ունեցել է և ունի իւր զեկը —
նպատակի և ուղղութեան որոշ
ծրագիրը, հիմնուած ներկայ քա-
ղաքական իրականութեանց պատ-
մական, գիտական բացատրու-
թեանց վրայ, և նա շարունակում
է իւր ընթացքը, իւր ճանապարհ-
հը առանց մի րոպէ խտրութե-
լու, ինչպէս խտրութեամբ է Գաշ-
նակցութիւնը, և առանց ուշադ-
րութիւն դարձնելու Գաշնակցու-
թեան և նրա հետ միասին իւր
զանազան գոյնի թշնամիներ
պառակտման բարձրանքներին,
ստերին և զրգարտութիւններին:
Կովկասեան և ընդհանրապէս ուս-
սական ներկայ հանդամանքները
պատմականօրէն ընթանող ամեն
մի բանիմաց անհատ արդէն գի-
տէ և համոզուած է, որ այդ եր-
կրում կուրի և փրկութեան միակ
ճանապարհը սօցիալիզմը ընտրած
ճանապարհն է, որի մէջ սաք են
կօխում այժմ և այն Գաշնակ-
ցականները, որոնք զգացել են
և ըմբռնել իրականութեան պա-
հանջները. իսկ, ձե՛ր, պ. նա-
ցիօնալիստներ, մնում է բացար-
ձակ անգործութիւնը և... ու-
րիշները արածը ձեզ վերադրե-
լով դրամ հաւաքել մութ ան-
կիւններում և կամ՝ ընտրել մեծ
քաղաքայէտ (?) պր. Մինաս
Չեղաչի ուղին, այն է՝ գի-
մել օտար պետութեանց դիւանու-
տունները և Լահէի միջալգային
ատեններն):

Մենք

Վ. Արնիս, 28 փետր. 904

Ա. հայտ 26-ին, կէս օրէ ա-
ռաջ տեղի ունեցաւ նահանգային
Գաղտարանին մէջ պ. Գալֆանանի
պատույ դատը՝ ընդդէմ փալասի
նախկին պատասխանատու պր.
Տրակուլէվի:

Փալասի խմբագիրը քաջու-
թիւն չունենալով իր սօտը զըր-
պարտութիւններու պատասխանա-
տուութիւնը ստանձնել, (այդպի-
սի ասպետական ընթացք կարելի
է սպասել բարոյագէտ փճայած
ողորմելիէ մը) Պուրկալէն Սար-
գիս Վարդանեան անուն անծա-
նօթ տղեկ մը (որ հաւանականա-
բար հերձուածի ամենաքաջ և ե-
ռանդուն խնկարկուներէն ըլլա-
լու է) համուզած էր, որպէսզի պ.
Գալֆանանը վատաբանող յօդա-
ծի իւր հեղինակ նարկայանայ
պատարանի առջև:

Պ. Գալֆանանի փատարանը,
ինչպէս նաև դատախազը տեսնե-
լով ալֆարիստական խղճուկ դան-
կի արդիւնք այդ ողորմելի իս-
զը, կը պահանջեն դատարանէն,
որպէսզի հակառակ վերոյիշեալ
անձի յատարարութեան, պ. Տը-
րակուլէվը պատասխանատու-
թեան զերծ չնկատէ: Այս իրա-
ւացի պահանջը կընդունուի դա-
տարանի կողմէ և կորչուի որ գա-
տը յետաձգուի, հրաւիրելու հա-
մար նաև վերոյիշեալ Սարգիս
Վարդանեանը:

Փալասի խմբագիր իր անճա-
րակութեամբ ծուղակը ին ամ է
և հիմայ պ. Տրակուլէվի հետ յիշ-
եալ ողորմելի ալֆարիստը պիտի
քաղէ իր անմտութեան պատուը:

Չ. Հրայր

*) Տես «Մարտում» No 585

Միանգամ ընդմիջում վերջ
դնելու համար այս խնդրին, հաս-
կը վերադառնալ այս մասին Հնչ.
կ. — Եան Գ. Պատգ. Ժողովի 85-րդ
նիստի մէջ արուած հետևեալ ու-
րջումը:

(Պատճեն)

85-րդ նիստի մէջ կայացած որոշում
1903 թիւ «Բարսիլոնա» լրագրի
No 61-ի մէջ Պարոն Պետրոս Գալֆա-
նանի մասին եղած ամբաստանութեան
առթիւ յայտնուած ենք, որ այդ հրատա-
րակած նամակը արդիւնք է լրտելի ան-
հին տարածախոթութիւնների և հետև-
աբար դարձնում Գալֆանանը գերծ է իրան
վերադառնալ ամբաստանութիւններից:
Գ. Պատգ. Ընդ. Ժողովի 85-րդ նիստի
Առնուագիրը Առնուագիր
Ս. Տրակուլէվի Վարդ Արնուան
17 Հոկտ. 1903 Լոնդոն

Իսկականի հետ ճիշտ լինելը
կը վաւերացնենք
Ի. Գալֆանանի Գ. Պատգ. Ժողովի
Առնուագիրը Առնուագիր
Բ. Վարդանյան Ե. Առնուան
(Կնիք)

Ո՞վ ՊԱՏՃԵՆ ԻՎԼԻ ՊԵՆՆԻՆՆԻՆ

Ռուսական ոստիկանական մասնու-
ղը, որուն հետ նաև մեր կուսակցու-
կան և «Գեղին» մասնուղը կը շարունա-
կեն դեռ խորհրդածութեան նիւթ սրկել
ըստիւրեան ոչ այնքան նշանակու-
թիւն ունեցող այն խնդրեր թէ՛ ո՞վ
սկսած է առաջին անգամ գիւնտրա-
կան գործողութիւնները մայրաքաղ-
Արեւելքի մէջ — ճարտիները թէ՛
ստեղծել: Մենք առիթը ունեցանք
գիտել տալու թէ՛ ուս կառավարու-
թիւնը այդ խնդրեր մէջտեղ նետելով
և զայն արուեստական կերպով ար-
ծարծելով: Կը ձգտի քողարկել ահա-
նախկին հարցը, այսինքն թէ՛ ո՞վ
պատճառ եղաւ ներկայ պատերազմի և
ն՞վ և այն յանցանքը, որուն պիտու
վրայ պէտք է թափուի մայր Արեւել-
քի մէջ հասած անմեղ արեան անէծքը:
Մեր ձեռքը գտնուած կարգ մը
վաւերագրութիւնք ապացուցինք
թէ՛ ո՞վ է յանցանքը: Այդ յանցան-
քը ուսական ազգայնօրիցն է: Սա-
կայն շահեկանութեան զո՛ր չի վրայ
ըլլալ սակ նաև կարծիքը նշանաւոր ուս-
սօցիալիստի մը՝ մեր ընկեր Բարվու-
սի ործանօթ է համայնարհային քաղա-
քականութեան շրջանակին մէջ իր
թանկագին աշխատանքներ իրենցը:
Պատերազմը սկսելէն դեռ չամիտառաջ
նետեւեալ գաղտնութիւնները բրած է:
«Բայց ինչպէս բացատրել այն
թէ՛ ինչու ուսական գիւնտարտու-
թիւնը գիտակցելով պետութեան ակա-
րութեան այդքան գրգռիչ դերը կը
բռնէ: Ան ստիպուած է այդպէս վար-
ուելու: Ցտրի կաւարարութեան ար-
տաքին գործերու մէջ յայտնութիւն-
ներ ունենալու անմիտ ձգտումը
անհրաժեշտ է կայսրութեան ներքին
սխալները ծածկելու համար: Ռու-
սաստանը արտաքին քաղաքականու-
թեան մէջ տար երեւնալու պէս կը
կորսնցնէ արտասահմանի մէջ իր ազ-
դեցութիւնը և վարելը: Ցտրիցը
չատնց եւրոպական սակարաններու
թողակառուէն (pensionnaire) դարձած է:
Ռուսական ազգայնօրիցը ներկայիս
մէջ սակարանական շահեկանութեան
աւելի բան մը չի ներկայացնել. որ-
քան որ խաղը զգալի բարձրացում տա-
նի (ուսականութեան թուլութեան), ցարի
գահը դեռ կանգուն կարելի է համա-
րել: Իսկ եթէ սակարանը անկրակ
խաղին մէջ աւելի հաշիւ գտնէ, այն
ատեն ցարի գահը պիտի տապալի:
Երկար տարիներու ընթացքին մէջ
գործադրուած փոխառութեան անընդ-
հատ սխտածը սուս. երեւոտական նա-
խարարներու մտքերը վերջին ծայր
օրեց և զարգացում անոնց դը-
րամ ճարտը: Ընդունալութիւնները:
Սակարաններու հետ վարուելու ար-
հեստը ամենարարձր տնտեսական գի-
տութիւնն է որ կը պահանջուի ոչ ոս
պետական մարդէն: Եւրոպական մէջ
ինչ միջոցներու չեն գիւնդ պետական
գանձին մէջ օտար կապիտալներ քա-
շելու համար: Երկարութեան քաղա-
քականութիւնը կը թափուի աւելի և
աւելի փոխառութիւններ ճարտը մի-
ջոցի մը կը վերածուի: փոխառու-
թիւններ, արոնցմէ յաճախ իմնասեր-
կաթուղային գործին գոյացած «մնա-

ցորդները կերթան լեցուելու պիտա-
կան գանձին մէջ:

Ցրանայի հետ եղած քարկամու-
թիւնը սկզբին մինչև վերջը գործած-
ուցաւ ֆրանսացի կապիտալիստներու
գրգանները պարպելու: ասիկա անց-
եալ դարու ամենամեծ սակարանական
խտրաբարութիւնն էր: Միևնոյն ե-
ղանակով Ռուսաստանի արտաքին քա-
ղաքականութեան մէջ ունեցած լու-
րաբանչիւր յարգութեան կընկերա-
նայ նոր փոխառութիւն մը: Եւ որ-
քան որ այդ յարգութիւնները նշա-
նակելի են, միևնոյն կողմէ այնքան ալ
փոխառութեան և դրամի պէտքը ըզ-
գալի կը լայ: Մասնաւորապէս Ռու-
սիայ խաղաղական Ուկրանոսի վրայ
երեւալը: Ցտրիսի սօցիալիստութեան
վերաբերեալ նոր ձայներու զուտ
սարսա անոր հետևը, որոնց շարքը
գիտ անձանօթ է: Ռուսական նա-
ստորոգը մինչև հիմա բացառապէս
եզերքները պատասխելու պաշտօն ու-
նէր: Հին Բուսիստ պէտք է նազա-
զական Ուկրանոսի մէջ մարտնասեր
պահէ, մրցելու համար Արգիլոյ և
ձապունի ժողային ուժերուն հետ: Եւ
ոչ մէկ երկրկրորդ իր զինուորական
նաւատորմը պահել բացառապէս սուր-
քերու հատկութիւնով: Նաւատորմի
ինչպէս նաև երկաթուղային գիծերու
պահպանումը փոխառութիւններով կը ը-
լլայ: Եւ մինչդեռ երկաթուղային գի-
ծերու շինութիւնը կը թափուի աւելի
կաթանայ ընդհակառակը նաւատոր-
մից շինութիւնը աւելի և աւելի
մեծ ծախսերու կը կարծուի և որոնց
վերջ մը կարելի չէ նախատեսել: Նա-
ւատորմից շինութիւնները միայնկըր-
նան երկր մը անհնկացնել: Ուրեմն
ինչ կարելի է սակ Ռուսիոյ համար,
որ միայն փոխառութիւններով կապ-
րի: Եւ մինչդեռ Արգիլոյ և Գերմա-
նիոյ իրենց նաւատորմիցներուն վրայ
ըրած ծախսերը քառիսան մը կը փո-
խարինն անոնց արտաքին վաճառա-
կանութեան զարգացումով, Ռուսաս-
տանը այս պարագային միայն ծախսե-
րու ենթակայ է և իր գաղթային
վաճառականութեան հետ: Երկաթուղու
չըրտանում է և այդպէս փոխառութիւն
և միջոց փոխառութիւն: Առանց փո-
խառութեան ցարիցը պիտի ստիպուի
իր նաւատորմը և բանակը զգալա-
պէս տկարացնել, տեսնելով միւս տէ-
րութիւններու պատերազմային ոյժը
իրեն բաղադրամաք: Եւ Ռուսաստանը
իվեակի պիտի ըլլայ ներկայ զին-
ուորական ստրութիւններու հետ պա-
տերազմի այն չափով: Ինչպէս
Տաճկաստանը կամ Չինաստանը:
Յայտնի է հիմա թէ՛ ինչու ցարը
մինչև հիմա այդքան սրտալարծ կեր-
պով կըրէր խաղաղութեան անհրա-
ժեշտութիւնը: Իր բանակին և նա-
ւատորմի վրայ ծախսերը չը կարեւալ գո-
ցելուն համար, անիկա բարեացակա-
նօրէն կատարուի միւս տէրութիւն-
ներուն դարեկան իրենց սպառազի-
նութիւնները: Բայց ցարը չի կրնալ
նահանջել իր արտաքին քաղաքակ-
նութեան մէջ: Ան պէտք է միջոց ա-
ռաջ կըրէ: Ուրիշ կերպ ամեն ինչ
պիտի ոչնչանայ:

Վերջապէս վարկեան մը եւս:
Ապօլիտորմի քաղաքականութիւնը
իր էութեան մէջ բացարձակ է: Անի-
կայ նկատի չառնել օտար շահերը և
ոչ ալ պատմական զարգացումը, և մի-
այն մէջ ոյժ կը ճանչնայ — բուռնցքը:
Ինչպէս որ Ռուսական ապօլիտորմը
իր սեփական երկրին մէջ կանգնա-
նայ իր աստիճանային զարգացման
մարմնացած իրողութիւնները, բանի
կերպով գոցելով ամէն ծակ և այդ-
պիսով մղելով ժողովուրդը դէպի յե-
զափոխութիւն, այնպէս ալ գոցելով
ձապունոյ արտաքին յարաբերութիւն-
ներուն զարգացման ճամբաները, կը
մղէ զայն դէպի պատերազմ:

Վերի գաղտնութիւններէն կար-
ծենք անգամ թէ՛ ալ կատարելապէս
յայտնի կը լայ թէ՛ ո՞վ պատճառ եղած
է նախարարին Արեւելքի ներկայ արեւ-
նաւ կտուին: Ռուսական տէպօտիզ-
մը չի կրնար վարկեան մը ապրել ա-
ռանց արտաքին բախտաստիքութիւն-
ներու, առանց արտաքին սկանստին-
ներու, որոնք պէտք են իրեն ուս ժո-
ղովուրդը խաբելու, իր ներքին թը-
նամիկներուն ուշադրութիւնը վերկի-
ցնելու և այս կերպով շարունակե-
լու իր խառնապակ գոյութիւնը ու
յետաձգելու իր անթափելի գանձութե-
մի ժամը:

(Работн. Вѣстникъ)